

**ԵՊՀ Իջևանի մասնաճյուղից ներքին շահակիցների (պրոֆեսորադասախոսական (ՊԴԿ) և ուսումնաօժանդակ անձնակազմի (ՈւՕԿ), ուսանողների) բավարարվածության վերաբերյալ հարցման արդյունքների վերաբերյալ/2015թ./**

**ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ**

Ցանկացած բուհի գործունեության արդյունավետությունը մեծապես կախված է այն հանգամանքից, թե որքանով են բավարարվում ներքին շահակիցների, տվյալ դեպքում պրոֆեսորա-դասախոսական և օժանդակ անձնակազմի, ինչպես նաև ուսանողության օբյեկտիվ և սուբյեկտիվ կարիքները: Այն կապված է բուհական համակարգի կառուցվածքային տարբեր տարրերի շահախնդիր գործունեությունից, որոնցից բավարարվածության աստիճանը, լինելով աշխատանքային և ուսումնական ակտիվության իրական խթան, միաժամանակ հենց այն սուբյեկտիվ ցուցանիշն է, որով գնահատվում են այդ կառույցների փոխհամաձայնեցված գործունեության արդյունավետությունը: Այն բացահայտելու նպատակով ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի Մասնագիտական կրթության որակի ապահովման բաժնի մասնագետների կողմից անց է կացվել պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ անձնակազմի, ինչպես նաև ուսանողության հարցում: Դասախոսական և ուսումնաօժանդակ անձնակազմից հարցվել են 42 հոգի այնպես, որպեսզի հնարավորինս ապահովվի համամասնությունը ըստ ֆակուլտետի, սեռի, տարիքի, հրավիրվածության /տեղաբնակության/: Ուսանողական կազմից գործնականում համատարած հարցվել են առկա ուսուցման սովորողների /հարցման օրերին բացականներից բացի/՝ 387 հոգի, իսկ հեռակա ուսուցումից՝ 100 հոգի: Վերջիններից, քանի որ անհամեմատ ավելի քիչ են լինում մասնաճյուղում և օբյեկտիվորեն պակաս տեղյակ են բուհի առօրյայից, չեն ընդգրկվել 1-ին և 2-րդ կուրսի ուսանողները: Հարցված բարձր կուրսի ուսանողների մեջ հնարավորինս պահպանվել է համամասնությունը ըստ ֆակուլտետների, կուրսի և սեռի:

Հարցաշարերից մեկում ընդգրկվել են հարցեր, որոնք կապված են մասնաճյուղի ռեսուրսներից և ծառայություններից, գործընթացների կազմակերպումից, ուսանողներից, ստորաբաժանումների աշխատանքից, մասնաճյուղի էլեկտրոնային կայքից պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ անձնակազմի բավարարվածության հետ: Մյուս հարցաշարում հարցեր են, որոնք բացահայտում են ուսանողների տեղեկացվածությունը և բավարարվածությունը խորհրդատվական ծառայություններից, կառուցվածքային ստորաբաժանումների աշխատանքից, շրջանավարտների և կարիերայի կենտրոնի, ֆակուլտետում կարիերային նպաստող աշխատանքներից, ուսանողների իրավունքները պաշտպանող պատասխանատուների, ուսանողական խորհրդի աշխատանքներից, օրինականության պահպանման և ուսանողների իրավունքների պաշտպանության հանձնաժողովի աշխատանքներից, էլեկտրոնային կայքից:

Բավարարվածությունը գնահատվել է 5-բալանի սանդղակով, որտեղ 1-ը ամենացածր, իսկ 5-ը՝ ամենաբարձր գնահատականն է:

Մասնաճյուղի ռեսուրսներից և ծառայություններից, ինչպես նաև գործընթացների կազմակերպումից պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ անձնակազմի բավարարվածության տվյալները բերված են աղյուսակ 1-ում և 2-ում:

Աղյուսակ 1.

Թիվ	Բավարարվածությունը	Միջ.գն.
1.1	աշխատատեղի կահավորումից,	4,0
1.2	աշխատատեղի տեխնիկայից (համակարգիչ, տպիչ սարք),	4,0
1.3	լսարանի կահավորումից,	4,2
1.4	լսարանի տեխնիկայից (համակարգիչ, տեսասարք),	3,4
1.5	մասնագիտական գրականությունից,	3,0
1.6	ընթերցասրահից,	4,0
1.7	ջեռուցումից,	3,7
1.8	հյուրանոցից (այլ բուհերից հրավիրված աշխատակիցների համար),	4,2
1.9	բուժկետի ծառայություններից,	4,2
1.10	անվտանգության համակարգից,	3,7
1.11	սանիտարահիգիենիկ վիճակից,	3,6
1.12	սննդի և հանգստի պայմաններից,	3,2
1.13	միջանձնային հարաբերություններից,	3,8
1.14	աշխատավարձից	2,7

Աղյուսակ 2.

Թիվ	Բավարարվածությունը	Միջ.գն.
2.1	ուսումնական գործընթացի կազմակերպումից,	4,3
2.2	կարգապահական գործընթացի կազմակերպումից,	4,7
2.3	մասնագիտական գործունեությանը նպաստող /օժանդակող/ միջոցառումներից,	3,6
2.4	գիտամշակութային կյանքի կազմակերպումից,	3,5
2.5	լրացուցիչ (արտաժամյա) աշխատանքի խրախուսումից,	2,1
2.6	ինքնագարգացման հնարավորությունից:	3,1

Ինչպես տեսնում ենք ընդհանուր գնահատականն ավելի շատ «հակված» է դեպի բավարար գնահատականը: Լավ են գնահատել /4 բալ և ավելի/ 14 ռեսուրսից 6-ի աշխատանքները և 6 գործընթացի կազմակերպումից՝ 2-ը: Եթե մի շարք օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառներով /ավանդույթների բացակայությունը, գործընկերներին «ավելորդ չնեղացնելու սինդրոմը», պատասխանների գաղտնիության պահպանման հանդեպ անվստահությունը և այլն/ ընդունենք նաև որոշակի «գերագնահատման» առկայությունը, ապա կարելի է ասել, որ պատասխաններում գերակշռում է միջին /բավարար/ գնահատականը: Դա նշանակում է, որ մասնաճյուղի գործունեության մեջ առկա են ոլորտներ, որոնց աշխատանքները կատարելագործվելու ավելի մեծ կարիք ունեն, ինդիկներ, որոնց լուծման համար պետք է ավելի մեծ ջանքեր գործադրել: Դա նախ և առաջ վերաբերում է նյութական խրախուսման համակարգին /աշխատավարձից բավարարվածության միջին բալը կազմում է ընդամենը 2,7, իսկ լրացուցիչ աշխատանքի խրախուսումը՝ 2,1/, մասնագիտական առաջխաղացման հնարավորություններին /մասնագիտական գրականությունից բավարարվածության միջին բալը 3,0 է, իսկ ինքնագարգացման հնարավորությունը՝ 3,1/: Հատկանշական է, որ գնահատման դրական բևեռը կազմում են ուսման կազմակերպման հետ անմիջականորեն առնչվող ոլորտների գործունեությունը /աշխատատեղի, լսարանի կահավորումից, ընթերցասրահից

բավարարվածությունը 4,0 բալ, հյուրանոց, բուժկետ՝ 4,2 բալ, ուսումնական գործընթացի կազմակերպում՝ 4,3 բալ և կարգապահական գործընթացի կազմակերպում՝ ամենաբարձրը՝ 4,7 բալ/։ Այստեղ կարծում ենք գնահատողների կողմից օբյեկտիվորեն արտացոլված է այն ակնհայտ առաջընթացը, որը 1990-ական թթ. համեմատ ունեցել է մասնաճյուղը, կապված հենց նրա գործունեության համար առանցքային նշանակություն ունեցող՝ անմիջականորեն ուսուցման գործընթացի կազմակերպման և անցկացման ոլորտում։ Առանց մերժելու մյուս, այսպես կոչված «ինֆրակառուցվածքային» ոլորտների կարևորությունը, հարկավոր է խոստովանել, որ մասնագետների պատրաստման հարցում նշված ռեսուրսները ամենակարևորներն են։

Մնացած ոլորտների գնահատականները գտնվում են այս երկու բևեռների միջակայքում։ Հետաքրքիր է նշել, որ ուսանողների համապատասխան գնահատականների հետ համեմատելիս /աղյուսակ 3/ ռեսուրսների մեծ մասից բավարարվածությունը որակապես չեն տարբերվում։

### Աղյուսակ 3.

Հարցմանը մասնակցած ուսանողների քանակն ըստ մասնագիտությունների/առկա, հեռակա/		486	56	26	57	67	59	59	37	97	21	7
Թիվ	Չեր բավարարվածությունը.	Միջ. գն.	Անգլ.	ԻԿՄ	Կ/Ա	ՀԼԳ	Մ/Հ	Պատմ	Մերվ	Տնտ	Ք/Կ Գ	ՖբԼ
24.1	լսարանների կահավորումից	3,98	4,02	3,74	2,91	4,54	3,80	4,22	4,08	3,93	4,14	4,43
24.2	լսարանների տեխնիկական միջոցներից	3,87	3,65	4,30	2,75	4,14	3,55	4,20	4,00	4,25	4,09	3,71
24.3	մասնագիտական գրականության առկայությունից	3,64	3,24	3,74	3,62	3,59	3,57	4,04	3,43	3,70	3,86	3,57
24.4	ընթերցասարահի հարմարավետությունից,	4,18	3,94	4,83	3,75	4,13	4,25	4,52	4,00	4,21	4,93	3,29
24.5	ջեռուցումից,	3,68	3,30	2,96	1,80	4,06	4,43	4,30	3,58	3,51	4,43	4,43
24.6	բուժկետի ծառայություններից,	3,89	3,11	3,53	3,46	4,06	4,09	4,17	4,08	3,84	5,00	3,57
24.7	անվտանգության ապահովման համակարգից,	3,70	3,71	3,35	3,44	4,02	3,52	4,00	2,93	3,34	5,00	3,71
24.8	սանիտարահիգիենիկ վիճակից,	4,01	3,58	3,94	3,56	4,27	3,73	4,16	3,88	3,71	5,00	4,29
24.9	սննդի և հանգստի պայմաններից,	3,95	3,58	4,00	3,25	4,20	3,91	4,18	3,66	3,56	5,00	4,14
24.10	գիտամշակութային կյանքից	4,09	3,71	4,06	4,04	4,20	3,83	4,20	4,03	3,98	5,00	3,86
24.11	մասնաճյուղում էթիկայի նորմերի պահպանումից	3,71	3,63	3,67	3,75	3,92	2,96	3,84	3,21	3,70	5,00	3,43
<b>Փոքրագույն գնահատականը (Min)</b>		3,64	3,11	2,96	1,80	3,59	3,52	4,00	2,93	3,34	3,86	3,29
<b>Մեծագույն գնահատականը (Max)</b>		4,18	4,02	4,83	3,75	4,54	4,43	4,52	4,08	4,25	5,00	4,43

Թերևս նշենք ուսանողների համեմատաբար ավելի մեծ գոհունակությունը սննդի և հանգստի պայմաններից /ուսանողների 4,0 բալը՝ դասախոսների և օժանդակ անձնակազմի 3,2 բալի դիմաց/

ու մասնագիտական գրականությունից /3,0 և 3,6 համապատասխանաբար/, ինչպես նաև լսարանի տեխնիկական հագեցվածությունից /3,4 և 3,9 համապատասխանաբար/: Կարծում ենք երևույթն ունի նաև իր բնական բացատրությունը: Ուսանողների որոշակի հատվածը, նախ և առաջ այն մասը, ով առանձնապես մտահոգված չէ իր առաջադիմությամբ, գիտելիքների յուրացմամբ, պարզ է, որ դասախոսների համեմատ պետք է պակաս պահանջկոտ լինեն թե մասնագիտական գրականության, և թե լսարանի տեխնիկական հագեցվածության հանդեպ: Բնական է նաև այն, որ համեմատաբար ավելի շատ ուսանողներ կգտնվեն, որոնք երիտասարդ, ավելի առողջ տարիքում համեմատաբար ավելի քիչ են հետևում իրենց սննդին ու հանգստին, ինչպես ասվում է կենցաղային տերմիններով՝ «բավարարվում են քչով»:

Միջին գնահատականի շրջանակում է նաև ուսանողներից բավարարվածությունը.

**Աղյուսակ 4.**

Թիվ	Բավարարվածությունը	Միջ.գն.
3.1	լրացուցիչ խորհրդատվական պարապմունքների արդյունավետությունից,	3,4
3.2	լրացուցիչ խորհրդատվական պարապմունքներին ուսանողների մասնակցությունից,	3,3
3.3	ուսանողների կարգապահությունից,	3,9
3.4	դասապրոցեսի նկատմամբ ուսանողների հետաքրքրվածությունից,	3,7
3.5	ուսանողների ինքնուրույն աշխատանքից:	3,0

Ինչպես տեսնում ենք դժգոհությունը համեմատաբար ավելի մեծ է ուսման գործընթացի հանդեպ ուսանողների պասիվությունից: Ամենացածր գնահատականը /3,0/ ստացել է ուսանողների ինքնուրույն աշխատանքը: Հաջորդը խորհրդատվությունների ընթացքում ուսանողների մասնակցությունն է /3,3/ և այդ պարապմունքների արդյունավետությունը /3,4/: Նշված երեք այս կետերը փոխկապված են և, ըստ էության, «նույն աշխարհի» երևույթներ են: Մտացված տվյալները ավելի շատ ներդաշնակվում են, այլ ոչ թե հակասում վերը բերված մեր այն դատողություններին, թե ուսանողները ավելի անտարբեր են մասնագիտական գրականությամբ հագեցվածության ու լսարանի տեխնիկական հնարավորությունների հանդեպ: Ուրիշ խոսքով հետազոտության արդյունքներով ուրվագծվում է մասնաճյուղի համար հիմնախնդիր /կամ՝ հաստատվում է տվյալ հարցի կարևորության վերաբերյալ ենթադրությունը/. **ուսման հանդեպ ուսանողների գիտակցական վերաբերմունքի զարգացումը:**

Ընդհանուր համատեքստին համահունչ է ուսանողների կարգապահությունից որակապես ավելի բարձր գոհունակությունը /3,9՝ ինքնուրույն աշխատանքի 3,0 բալի դիմաց/, քանի որ վերջին տարիներին, ինչպես նշեցինք մասնաճյուղի ղեկավարությունը օբյեկտիվորեն տվյալ ոլորտում արձանագրել է առաջընթաց: Ինչպես դասավանդողների, այնպես էլ սովորողների մոտ էլ ավելի բարձր է գոհունակությունը մասնաճյուղի ընդհանուր գործունեությունը կառավարող ստորաբաժանումների աշխատանքից.

**Աղյուսակ 5.**

Թիվ	Բավարարվածությունը	ՊԴԿ և ՈւՕԿ	Ուսանողներ
4.1	տնօրենության աշխատանքից,	4,3	4,7
4.2	անձնակազմի կառավարման բաժնի աշխատանքից,	4,1	4,6
4.3	ուսումնամեթոդական վարչության աշխատանքից,	4,3	4,6
4.4	վարչատնտեսական վարչության աշխատանքից,	3,9	4,5
4.6	հաշվապահության աշխատանքից,	4,3	4,5

Ինչպես տեսնում ենք գործնականում բոլորը չորսից բարձր գնահատականներ են /4,1-4,7/ մեկից բացի /3,9/, որը 0,2 բալ թույլատրելի սխալի պայմաններում որակապես չի տարբերվում մյուս գնահատականներից: Սա ևս բացատրելի է: «Նրանց գործունեության հիմնական մասը, հատկապես այն, ինչն անմիջականորեն վերաբերում է մեզ և ուսանողներին,- մասնավոր գրույցների ժամանակ հավաստում էին «հնաբնակները», նրանք, ովքեր ի սկզբանե, կամ 15 տարուց ավելի դասավանդում են մասնաճյուղում,- տեսանելի է բոլորին: Այնպես որ այստեղ թերևս դժվար է արհեստականորեն գերազնահատել կառավարիչների գործունեությունը: Անգեն աչքով էլ երևում է, որ մասնաճյուղը, որպես բարձրագույն կրթօջախ կայացել է, ձեռք է բերել ուրույն ձեռագիր և աստիճանաբար այն զարգացնում է,- նշում էին նրանք»: Ընկալելի է նաև կառավարումն ապահովող ստորաբաժանումներին դասավանդողների տրված գնահատականների հանդեպ ուսանողների փոքր ինչ ավելի բարձր գնահատականները: Ինչպես տեսնում ենք որակապես գրեթե չեն տարբերվում միայն հաշվապահությանը տրված գնահատականները: Մյուս բոլոր ստորաբաժանումների գործունեության գնահատումներում տարբերությունները տատանվում են 0,3-0,6 շրջանակում: Ուսանողի կարգավիճակի յուրահատկությունները՝ երիտասարդ տարիք, նման երևույթները գնահատելու մշակույթի, փորձի պակաս, «վերադասի /դասախոսների/ վերադասին/դեկավարություն/» գնահատելուց կաշկանդվածություն /նաև հնարավոր ամոթխածության տեսքով/ և այլն ուսանողներին հոգեբանորեն մղում է գնահատումներում որոշակի զգուշության, գիտակցական գերազնահատման:

Այդուհանդերձ, ելնելով հարցման արդյունքներից կարելի էն պնդել, որ դասավանդող անձնակազմի և ուսանողության գիտակցության մեջ ավելի շատ իշխում է այն կարծիքը, թե ԵՊՀ Իջևանի մասնաճյուղը ներկայումս կառավարվում է հիմնականում բանիմաց ու բարյացակամ դեկավար կադրերի կողմից, որոնք, առանց էական թերությունների ու վրիպումների ձգտում և կարողանում են ապահովել կառավարչական ստորաբաժանումների անխափան գործունեությունը:

Սույն առնչությամբ հատկանշական են նաև մասնաճյուղի կայքի կառավարմանը տրված գնահատականները: Մրանք պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ անձնակազմի, ինչպես նաև ուսանողների գնահատականներում, մյուս բաղադրիչների համեմատ ամենաբարձրն են.

**Աղյուսակ 6.**

Հարցման մասնակիցներ	շատ հաճախ	հաճախ	երբեմն	հազվադեպ կամ չեմ օգտվում
ՊԴԿ և ՈւՕԿ	28,6%	50,0%	14,3%	7,1%
Ուսանողներ	30,9%	31,8%	22,9%	14,4%

Կառավարման գործընթացի թափանցիկության, աշխատակիցների և սովորողների իրազեկվածության ապահովման, գործունեության և ուսման մեջ տեղեկույթի փոխանակման տեսանկյունից անհնար է թերագնահատել կայքի, որպես աշխատանքի արդյունավետության գերժամանակակից գործոնի դերը: Ի պատիվ այս գործի պատասխանատուների, նրանց արհեստավարժ ու նվիրված գործունեության, ընդամենը երեք տարվա պատմություն ունեցող մասնաճյուղի կայքը դարձել է մասնագետների պատրաստման գործընթացում առանցքային պատասխանատուների՝ դասախոսների, լաբորանտների, գործավարների և ուսանողների «սիրելին»: Ըստ որում ուսանողների համար մի փոքր ավելի, քան դասախոսների, որը նույնպես ընկալելի է, որպես ժամանակակից երիտասարդների հոգեբանության մեջ ավելի կարևոր ու բնական անհրաժեշտություն՝ կենսական և ուսումնական գործիք: Ըստ ստացված տվյալների, կայքից շատ հաճախ և հաճախ օգտվում են պրոֆեսորադասախոսական և ուսումնասովորական անձնակազմից հարցվածների 5-ից 4-ը, իսկ ուսանողների՝ 5-ից 3-ը: Կայքից հազվադեպ են օգտվում կամ գրեթե չեն օգտվում ուսանողների՝ 7-ից մեկը, իսկ դասավանդողների՝ ընդամենը 14-ից մեկը:

Հինգ բալանի սանդղակով հիմնականում 4,5-ից բարձր գնահատականները հավաստում են, որ գրավիչ ու մատչելիությունը ապահովող կառուցվածքով լիարժեք տեղեկույթի մատուցումը բուհական կյանքի նորությունների, նախատեսվող ու անցկացվող բազմաբնույթ միջոցառումների, գիտաուսումնական ոլորտում ձեռքբերումների մասին կայքը դարձրել են մասնաճյուղի գործունեության արդյունավետության ապահովման անփոխարինելի միջոցի: Միաժամանակ հարկ է չնոռանալ, որ տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտը ամենաարագ փոփոխվողներից է և պահանջում է վերապատրաստման ու վերաորակավորման ամենօրյա պատրաստակամություն՝ կայքի պատասխանատու մասնագետների կողմից, համապատասխան տեխնիկական միջոցների նորացման պատրաստակամություն՝ մասնաճյուղի ղեկավարության կողմից, և, որ պակաս կարևոր չէ, տվյալ ոլորտի նորամուծություններին շահախնդրորեն ծանոթանալու և օգտվել կարողանալու պատրաստակամություն՝ օգտագործողների /տվյալ դեպքում դասավանդողների և սովորողների/ կողմից:

Մանրամասնենք նաև ուսանողական հարցաշարից ստացված տվյալները: Աղյուսակ 7-ում բացարձակ թվերով և տոկոսներով բերված են լրացուցիչ խորհրդատվական պարապմունքներում ուսանողների իրազեկվածության և ընդգրկվածության վերաբերյալ տվյալները:

**Աղյուսակ 7.**

Հարցմանը մասնակցած ուսանողների քանակն ըստ մասնագիտությունների		486	56	26	57	67	59	59	37	97	21	7
Թիվ	Հարցի բովանդակությունը	Ընդ.	Անգ Լ	ԻԿՄ	Կ/Ա	ՀԼԳ	Մ/Հ	Պատմ	Սերվ	Տնտ	Ք/ԿԳ	ՖրԼ
1.2	Տեղեկացված էք արդյոք լրացուցիչ խորհրդատվական պարապմունքների մասին	296	46	24	47	39	21	28	22	55	8	6
2	Ընդգրկված էք արդյոք լրացուցիչ խորհրդատվական պարապմունքներում:	136	26	11	32	24	7	7	9	15	4	1

Թիվ	Հարցի բովանդակությունը	Ընդ.	Անգ Լ	ԻԿՄ	Կ/Ա	ՀԼԳ	Մ/Հ	Պատմ	Սերվ	Տնտ	Ք/ԿԳ	ՖրԼ
-----	------------------------	------	-------	-----	-----	-----	-----	------	------	-----	------	-----

1.2	Տեղեկացված էք արդյոք լրացուցիչ խորհրդատվական պարապմունքների մասին	60,91%	82,14 %	92,31 %	82,46 %	58,21 %	35,59 %	47,46 %	59,46 %	56,70 %	38,10 %	85,71 %
2	Ընդգրկված էք արդյոք լրացուցիչ խորհրդատվական պարապմունքներում:	27,98%	46,43 %	42,31 %	56,14 %	35,82 %	11,86 %	11,86 %	24,32 %	15,46 %	19,05 %	14,29 %

Նախ ասենք, որ հայաստանյան կրթական համակարգի ներկա զարգացումներում կրթության որակի բարձրացման կարևոր գործոններից մեկը համարվում է սովորողների ինքնուրույնության զարգացումը, ինքնակրթությունը: Դրա իրացման գլխավոր պայմաններից մեկը կրթության կազմակերպիչների կողմից հնարավոր պայմանների ստեղծումն է, տվյալ ցանկության իրագործմանն օժանդակումը: Ահա լրացուցիչ խորհրդատվական պարապմունքների ինստիտուտի ներմուծումը, ուսանողների կողմից պահանջարկի դեպքում դասախոսների, մասնագետների հետ լրացուցիչ հանդիպումների հնարավորության ստեղծումը, դրանց պարտադիր ու պարբերական գործառնական ապահովումը հենց այն ուղին է, որը կարող է բերել ուսանողների ինքնակրթության զարգացմանը: Այդ պատճառով զարմանալի չէ, որ մեր հանրապետության ցանկացած բուհ տվյալ հարցին նվիրում է կարելիվսյն լուրջ ուշադրություն: Դրա դրսևորումներից մեկն էլ երևույթի ուսումնասիրությունն է համապատասխան մասնագետների ու կառույցների կողմից:

Ինչպես տեսնում ենք ըստ մասնագիտությունների տվյալները բավական ցրված են և պահանջում են լրացուցիչ հիմնավորումներ: Այսպես, օրինակ, եթե տրամաբանորեն հասկանալի և բացատրելի են ընդգրկվածության համեմատ իրազեկվածության ավելի բարձր արժեքները, իսկ տարբեր մասնագիտությունների ուսանողների տեղեկացվածության 80,0 և ավելի տոկոսը գրեթե իդեալական արժեք է /Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա, Ֆրանսերեն լեզու և գրականություն, Անգլերեն լեզու և գրականություն, Կիրառական արվեստ/, ապա նույնը չենք կարող ասել այն փաստի մասին, որ առանձին մասնագիտությունների գծով, ըստ հարցված ուսանողների, երեքից երկուսը տեղյակ չեն նման պարապմունքներին մասնակցելու հնարավորության մասին /մասնավորաբար՝ Մանկավարժություն և հոգեբանություն, Պատմություն, Քարտեզագրություն և կադաստրային գործ/: Բնական է, որ այն պետք է բացասական ազդեցություն ունենա լրացուցիչ պարապմունքներում ուսանողների ընդգրկվածության վրա, և, այնքան ավելի մեծ, որքան ավելի հիմնավորված համարվի տվյալների հավաստիությունը: Դրա համար էլ պատահական չէ, որ ընդգրկվածության տվյալները, որպես կանոն, այնքան ավելի են նվազում, որքան ավելի փոքր է իրազեկվածությունը: Օրինակ, վերոնշյալ մասնագիտությունների գծով ընդգրկվածությունը խորհրդատվական պարապմունքներում ընդհանուր առմամբ ավելի փոքր են: Առանձին մասնագիտությունների գծով այստեղ հարցվածներից ընդգրկված են իննը կամ ութ ուսանողներից մեկը, որը կարելի է համարել փոքր ցուցանիշ:

Կարծում ենք, որ երևույթն ունի բազմաբնույթ պայմանավորվածություն: Երբ նայում ենք տվյալները ըստ ուսուցման ձևերի, ապա տեսնում ենք, որ առկա ուսուցման հարցված ուսանողների ընդգրկվածությունը /31,01%/ մոտ երկու անգամ գերազանցում է հեռակա ուսուցման հարցված ուսանողների ընդգրկվածությանը /16,6%/ /տես աղյուսակ 7/: Միանշանակ չեն նաև ըստ մասնագիտությունների տվյալները: Օրինակ, Մանկավարժություն և հոգեբանություն

մասնագիտության համար, որտեղ ստացվել էին ամենափոքր ցուցանիշներից մեկը /11,86 տոկոս/, առկա ուսուցման հարցված ուսանողների միայն 5,26%-ն է ընդգրկված այն դեպքում, երբ հեռակա ուսուցման համար այն կազմում է 23,8%: Հատկանշական է, որ այստեղ ընդգրկված են 6 իրազեկված ուսանողից 5-ը /պատասխանել է 21 ուսանող/: Փաստորեն ստացվում է, որ, ով տեղյակ է եղել, համաձայնվել է մասնակցել նման պարապմունքներին, այն դեպքում, երբ 12 իրազեկված տնտեսագետներից միայն 3-ն են մասնակցում: Մյուս կողմից հարցմանը մասնակացած ուսանողները, գրեթե բացարձակ իրազեկվածություն են դրսևորել ուսումնական խորհրդատուների գործունեության, նրանց մատուցած ծառայությունների մասին /աղյուսակ 7/: Բարձր է նաև նրանց աշխատանքներից բավարարվածության աստիճանը՝ 4,79-5,0 բալ, բացառությամբ պատմություն մասնագիտության, որտեղ այն համեմատաբար ցածր է՝ 4,0 բալ, չնայած ինքնին բարձր /լավ/ գնահատական է ընկալվում:

**Աղյուսակ 8**

Հարցմանը մասնակցած ուսանողների քանակն ըստ մասնագիտությունների /առկա/		387	56	26	57	46	38	41	37	79	7
Թիվ	Հարցի բովանդակությունը	Միջ. գն.	Անգլ.	ԻնՖՄ	Կ/Ա	ՀԼԳ	Մ/Հ	Պատմ.	Մեդ. վ.	Տնտ.	ՖրԼ.
3.1	Ձեր բավարարվածությունը խորհրդատուի (կուրսատոր, կուրսղեկ) աշխատանքներից, ծառայություններից,	4,80	4,79	5,00	4,79	5,00	4,94	4,05	4,88	4,86	4,86
3.2	Ձեր բավարարվածությունը լրացուցիչ խորհրդատվական պարապմունքներից:	3,99	4,46	4,35	4,50	4,69	3,23	3,59	3,59	3,50	4,00

Հարցմանը մասնակցած ուսանողների քանակն ըստ մասնագիտությունների/հեռակա/		99	21	21	18	18	21
Թիվ	Հարցի բովանդակությունը	Միջ. գն.	ՀԼԳ	Մ/Հ	Պատմ.	Տնտ.	Ք/ԿԳ
3.1	Ձեր բավարարվածությունը խորհրդատուի (կուրսատոր, կուրսղեկ) աշխատանքներից, ծառայություններից,	4,76	4,67	4,57	4,75	4,82	5,00
3.2	Ձեր բավարարվածությունը լրացուցիչ խորհրդատվական պարապմունքներից:	4,14	4,25	3,80	3,67	4,00	5,00

Նույն աղյուսակից երևում է, որ համեմատաբար ավելի ցածր են ու ցրված լրացուցիչ խորհրդատվական պարապմունքներից բավարարվածության արժեքները /3,23-4,69/: Այն դեպքում, երբ, օրինակ, առկա ուսուցման հայոց լեզվի և գրականության, անգլերենի, կամ կիրառական արվեստի մասնագիտությունների գծով լրացուցիչ պարապմունքներից բավարարվածությունը ձգտում է բարձրագույնին /4,46-4,69/, ավելի քան մեկ բալ պակաս են տվյալները մանկավարժության և հոգեբանության, տնտեսագիտության գծով /3,23-3,50/: Առկա և հեռակա ուսուցման գծով տվյալ հարցի ամփոփ պատասխանները բերված են աղյուսակ 9-ում:



Աղյուսակ 9.

Հարցմանը մասնակցած ուսանողների քանակն ըստ մասնագիտությունների		486	56	26	57	67	59	59	37	97	21	7
Թիվ	Հարցի բովանդակությունը	Միջ-գն.	Անգլ.	ԻԿՄ	Կ/Ա	ՀԼԳ	Մ/Հ	Պա-տմ	Սեր-վ	Տես	Ք/Կ-Գ	ՖրԼ
3.1	Ձեր բավարարվածությունը խորհրդատուի (կուրատոր, կուրսղեկ) աշխատանքներից, ծառայություններից,	4,81	4,79	5,00	4,79	4,90	4,84	4,22	4,88	4,85	5,00	4,86
3.2	Ձեր բավարարվածությունը լրացուցիչ խորհրդատվական պարապմունքներից:	4,12	4,46	4,35	4,50	4,59	3,39	3,62	3,59	3,66	5,00	4,00

Այս ամենը խոսում է այն մասին, որ խորհրդատվության հնարավորությունների վերաբերյալ ուսանողների իրազեկվածությունը, այդ հնարավորությունների օգտագործումը առկա և հեռակա ուսուցման ուսանողների կողմից և պատասխանատուների /դասախոս, կուրսղեկ, ամբիոն, ֆակուլտետ/ գործունեությունից իրենց բավարարվածությունը կարող են ունենալ ամենատարբեր պատճառներ: Տարբեր չափի «մեղավորներ» կարող են լինել բոլորը: Այդ դերում կարող են լինել ուսանողների այն մասը, որն ընդգրկվել է հարցման մեջ և առանձնապես մեծ ձգտում չունի մասնագիտական գիտելիքներ ու հմտություններ ձեռք բերելու, ունի ոչ համարժեք մասնագիտական կողմնորոշում, առանձնապես չի հետաքրքրվում մասնաճյուղի ծառայությունների հնարավորություններով, դրանցից օգտվելու իր ցանկությամբ և կարողությամբ: Հանուն ճշմարտության խոստովանենք, որ կարող է լինել առաջադիմող, ինքնագիտակցության բարձր մակարդակ ունեցող և ինքնակրթությունը համարժեքորեն գնահատող ուսանողական խումբ, որն առանձնապես կարիք չունենա լրացուցիչ խորհրդատվության: Անբավարար իրազեկվածության, տվյալ պարապմունքներին մասնակցության ոչ ցանկալի որակի ու քանակի մեջ կարող են «մեղավոր» լինել դրա կազմակերպման պատասխանատուները՝ դասախոս, ամբիոն, ֆակուլտետ: Մի դեպքում դասախոսներն են անպատասխանատվություն դրսևորել, ուրիշ դեպքում իրենց ժամանակին չեն իրազեկել, երրորդ դեպքում՝ ֆակուլտետի ղեկավարությունն է զլացել ամբիոններին համարժեքորեն ներկայացնելու գործի կարևորությունը, չորրորդ դեպքում ամբիոնի անձնակազմը չի ընկալում դրա կարևորությունը, հակառակը՝ հիմնավորում է լրացուցիչ պարապմունքների անօգտակարությունը և այլն: Փաստարկների այս շարքը կարելի է շարունակել, սակայն այն չի փոխի համոզմունքը, թե լրացուցիչ խորհրդատվական պարապմունքների իրազեկման ու դրանց մեջ մասնակցության ավելի խորը հետազոտման խնդիր կա և, օգտվելով տվյալ հարցման արդյունքներից, հարկ է համապատասխան ծրագրով իրագործել համարժեք ուսումնասիրություն ու ներկայացնել խնդրի գործնական լուծման որոշակի տարբերակներ:

Հանրապետությունում ձևավորված ու զարգացող մասնավոր սեփականատիրական հարաբերություններում, դրա հետ փոխկապված կրթական զարգացումներում նորովի է դրված բուհական շրջանավարտների աշխատանքի տեղավորման, աշխատանքում առաջխաղացման խնդիրները: Նշված գործընթացները օրախնդիր են դարձնում ուսման ընթացքում աշխատանքային հնարավորությունների վերաբերյալ սովորողների իրազեկվածության, սեփական գործունեության ոլորտը ընտրելու և ապագա աշխատանքի օգուտներն ու վնասները գնահատելու հարցում անձնական մասնակցության խնդիրները: Որպես արդյունք վերջին տարիների նորույթ է բուհերում

«Շրջանավարտների ու կարիերայի կենտրոնների» ինստիտուտի ձևավորումը: Դրանց հիմնական առաքելությունը գործատուների և ապագա մասնագետների միջև փոխհարաբերությունների «կամուրջի» ձևավորումն է, ինչը, ի շահ երկու կողմերին էապես կարող է հեշտացնել տեղեկությունների փոխանակման և ավարտելուց աշխատանքի տեղավորման գերժամանակակից խնդրի լուծումը:

Նման կենտրոնը գործում է նաև ԵՊՀ Իջևանի մասնաճյուղում: Աղյուսակ 10-ում բացարձակ թվերով ու տոկոսներով, ամփոփ տեսքով բերված են Շրջանավարտների և կարիերայի կենտրոնի մասին հարցված 486 ուսանողների իրազեկվածության, նրա ծառայություններից օգտվելու և տվյալ ուղղությամբ ֆակուլտետում իրականացվող աշխատանքներում մասնակցության վերաբերյալ տվյալները:

**Աղյուսակ 10.**

Հարցմանը մասնակցած ուսանողների քանակն ըստ մասնագիտությունների /առկա, հեռակա/		486	56	26	57	67	59	59	37	97	21	7
Թիվ	Հարցի բովանդակությունը	Ընդ.	Անգլ.	ԻԿՄ	Կ/Ա	ՀԼԳ	Մ/Հ	Պատմ	Սերվ	Տնտ	Ք/ԿԳ	ՖրԼ
9	Տեղեկացված եք արդյոք Շրջանավարտների և կարիերայի կենտրոնի մասին:	161	16	12	33	26	12	21	13	23	3	2
10	Օգտվում եք արդյոք կենտրոնի ծառայություններից:	56	4	8	12	7	6	6	3	9		1
13	Ներգրավված եք եղել արդյոք ֆակուլտետում իրականացված կարիերային նպաստող աշխատանքներում:	130	9	9	37	17	10	13	10	22	1	2

Թիվ	Հարցի բովանդակությունը	Ընդ.	Անգլ.	ԻԿՄ	Կ/Ա	ՀԼԳ	Մ/Հ	Պատմ	Սերվ	Տնտ	Ք/ԿԳ	ՖրԼ
9	Տեղեկացված եք արդյոք Շրջանավարտների և կարիերայի կենտրոնի մասին:	33,13 %	28,57 %	46,15 %	57,89 %	38,81 %	20,34 %	35,59 %	35,14 %	23,71 %	14,29 %	28,57 %
10	Օգտվում եք արդյոք կենտրոնի ծառայություններից:	11,52 %	7,14 %	30,77 %	21,05 %	10,45 %	10,17 %	10,17 %	8,11 %	9,28 %	0,00 %	14,29 %
13	Ներգրավված եք եղել արդյոք ֆակուլտետում իրականացված կարիերային նպաստող աշխատանքներում:	26,75 %	16,07 %	34,62 %	64,91 %	25,37 %	16,95 %	22,03 %	27,03 %	22,68 %	4,76 %	28,57 %

Ինչպես տեսնում ենք ամբիոնների կտրվածքով այստեղ ևս տվյալները բավական ցրված են. Տեղեկացվածությունը՝ 14,29%-57,89%; ծառայությունից օգտվելը՝ 0,00%-30,77%; ներգրավվածությունը ֆակուլտետային աշխատանքներում՝ 4,76%-64,9%: Այստեղ ևս

պատճառները կարող են ամենատարբերը լինել այն դեպքում, երբ իրենց իսկ, ապագա մասնագետների, հատկապես շրջանավարտների համար կենսական կարևորություն ունեն հետբուհական հնարավոր գործունեության վերաբերյալ իրազեկվածությունը և մասնաճյուղի ծառայություններից օգտվելը: Մի դեպքում դա կարող է լինել կենտրոնի աշխատանքներից դժգոհությունը /տես աղյուսակ 11/, մեկ ուրիշ դեպքում իրենց իսկ սովորողների որոշակի պասիվությունը, կապված սեփական գործունեությունը և աշխատանքային նպատակները ինքնուրույն տնօրինելու կարևորության ոչ պատշաճ ըմբռնման հետ, երրորդ դեպքում մասնաճյուղի կենտրոնի հետ գործատուների ոչ բավարար փոխգործակցությունը և այլն: Այսինքն, գործնական առաջարկների համար բավարար արդյունքների ձեռքբերման նպատակով, այստեղ ևս առաջանում է երևույթի ավելի խորը հետազոտման անհրաժեշտություն:

**Աղյուսակ 11.**

Թիվ		Առկա	Հեռակա	Միասին
11	Գնահատեք ձեր բավարարվածությունը շրջանավարտների և կարիերայի կենտրոնի աշխատանքից:	3,73	4,19	3,90
14	Գնահատեք ձեր բավարարվածությունը ֆակուլտետում իրականացված Ձեր կարիերային նպաստող աշխատանքներից:	4,06	4,02	4,13
<b>Հարցմանը մասնակցած ուսանողների քանակը</b>		<b>387</b>	<b>99</b>	<b>486</b>

Բարձրագույն ուսումնական հաստատությունների գործունեության մեջ նորովի է կարևորվում ուսանողական խորհուրդների դերը: Շատ բուհերում դրանք կայացած ինստիտուտներ են և առանցքային դեր ունեն դեկանատության, դասախոսական անձնակազմի ու սովորողների միջ հետադարձ կապի ապահովման խնդրում: Բացառություն չէ նաև մասնաճյուղի ուսանողական խորհուրդը, որի գործունեությունից բավարարվածությունը, մյուսների համեմատ որակապես ավելի բարձր է՝ /միջին գնահատականը 4,24՝ 5 բալանի սանդղակով գնահատված/: Ամբիոնների կտրվածքով համեմատաբար ցածր են միայն երկու ամբիոնների ուսանողների գնահատականները /Սերվիսը՝ 3,73, Մանկավարժությունն ու հոգեբանությունը՝ 3, 84/: Հատկանշական է, որ ուսխորհրդի մասին իրազեկվածությունը և նրա ծառայություններից օգտվելը այս ամբիոններում բարձրերից է՝ /86,49%, 40,54% և 77,9%, 44,07% համապատասխանաբար/, մինչդեռ, օրինակ Քարտեզագրության և կադաստրային գործի ուսանողների միայն 23,8 տոկոսն է տեղյակ և՛ ընդամենը 4,76 տոկոսն է օգտվում այդ ծառայությունից /տես աղյուսակ 12/ այն դեպքում, երբ բավարարվածությունը ամենաբարձրն է /5,0 բալ/:

**Աղյուսակ 12.**

<b>Ձեր բավարարվածությունը ուսանողական խորհրդի աշխատանքից</b>											
Ուսուցման ձևը	Միջ. գն.	Անգլ.	ԻԿՄ	Կ/Ա	ՀԼԳ	Մ/Հ	Պատմ	Սերվ	Տնտ	Ք/ԿԳ	ՖրԼ
առկա	4,15	4,19	4,00	4,26	4,39	3,84	4,27	<b>3,73</b>	4,26	4,40	4,40
հեռակա	4,43				4,60	3,70	4,33		4,50	5,00	
<b>Միասին</b>	<b>4,24</b>	<b>4,19</b>	<b>4,00</b>	<b>4,26</b>	<b>4,44</b>	<b>3,81</b>	<b>4,29</b>	<b>3,73</b>	<b>4,30</b>	<b>5,00</b>	<b>4,40</b>

Տվյալ երբեմնի հակասական իրողությունները ևս պետք է հաջորդ հետազոտության մեջ դառնան առանձին ուշադրության առարկա: Ուսումնասիրությունը պետք է պարզի, թե ինչպես է հնարավոր ցածր իրազեկվածության և ծառայության հնարավորություններից օգտվելու պայմաններում ունենալ նման բարձր բավարարվածություն: Դա հետազոտողների վրիպումն է, պատասխանողների անպատասխանատվությունը, թե անհայտ մի երևույթ?: Ավելի համարժեք քննարկման և վերլուծության առարկա պետք է դառնա նաև Օրինականության պահպանման և ուսանողների իրավունքների պաշտպանության հանձնաժողովի մասին բարձր իրազեկվածության և նրա ծառայությունից օգտվելու անհամեմատ ցածր ցուցանիշները: Այսպես, առկա ուսուցման 387 ուսանողներից 362 /93,2 տոկոս/ տեղեկացված են հանձնաժողովի մասին, սակայն նրա ծառայությունից օգտվում են միայն 76-ը /19,6 տոկոս/: Հնարավոր է, որ շատ ուսանողներ իմանան հանձնաժողովի, նրա հնարավորությունների մասին, սակայն առիթ կամ պատճառ չունենան դիմելու հանձնաժողովի օգնությանը: Բացառված չեն նաև այն դեպքերը, երբ որոշ ուսանողներ կարիք ունենան դիմելու հանձնաժողովին, սակայն՝ հույս չունենան, որ իրենց խնդիրներին կարձագանքեն համարժեքորեն: Այստեղ, օրինակ, շատ կարևոր են հանձնաժողովին դիմելու դեպքերի քանակությունը և ծառայության արձագանքներից բավարարվածության աստիճանը:

Ամփոփելով ԵՊՀ Իջևանի մասնաճյուղից ներքին շահակիցների (պրոֆեսորադասախոսական (ՊԴԿ) և ուսումնաօժանդակ անձնակազմի (ՈւՕԿ), ուսանողների) բավարարվածության վերաբերյալ հարցման արդյունքները /2015թ./ կարող ենք նշել հետևյալը.

- Մասնաճյուղի ռեսուրսներից և ծառայություններից /ներառյալ կայքը և ուսանողական խորհուրդը/, ինչպես նաև գործընթացների կազմակերպումից ուսումնական պլանները անմիջականորեն իրականացնողների /դասախոսական և ուսումնաօժանդակ անձնակազմ/ և ուսանողության բավարարվածության տվյալների համադրումը վկայում է, որ տվյալ սոցիումի գիտակցության մեջ իշխում է այն կարծիքը, թե բուհը կառավարվում է հիմնականում արհեստավարժ անձանց և ստորաբաժանումների կողմից՝ երկրի կրթական համակարգի ժամանակակից պահանջներին համապատասխան;
- Բավարարվածության համեմատաբար ցածր գնահատականները ապացուցում են, որ մասնաճյուղում առկա են խնդիրներ, կապված նյութական խրախուսման համակարգի և ուսանողության ինքնակրթության հնարավորությունների հետ, ըստ որում տարբեր բնույթի և խորության են տարբեր մասնագիտությունների և ամբիոնների համար;
- Առանձին ամբիոնների և կրթական ուղղությունների կտրվածքով առկա են որոշակի օբյեկտիվ-սուբյեկտիվ հիմնախնդիրներ, կապված «Օրինականության պահպանման և ուսանողների իրավունքների պաշտպանության հանձնաժողովի», ինչպես նաև «Շրջանավարտների ու կարիերայի կենտրոնի» գործունեության հետ;

#### **Ելնելով վերոնշյալից առաջարկվում է.**

- Բոլոր ֆակուլտետներում և ամբիոններում, դասախոսական և ուսումնաօժանդակ անձնակազմի հետ հարցման արդյունքները դարձնել հատուկ քննարկման առարկա, առանձնակի շեշտադրումով այն խնդիրների վրա, որոնք բնորոշ են տվյալ ֆակուլտետին կամ ամբիոնին;
- Հարցման արդյունքները քննարկել նաև ֆակուլտետային ուսանողական խորհուրդներում, դրանց մասնակից դարձնելով ցանկացող ուսանողներին;

- Քննարկման արդյունքները համադրելով և մասնաճյուղի ղեկավարության հետ համաձայնեցնելով մշակել ծրագիր և իրագործել նոր հետազոտություն այն նպատակով, որպեսզի բացահայտել ուսման կազմակերպման տարբեր բաղադրիչներից դասավանդողների և սովորողների դժգոհության օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառները, այն, ինչը թույլ կտա գործնական առաջարկություններ կատարել տվյալ ոլորտի գործունեության մեջ առաջընթացն ապահովելու համար;
- Արդյունքների հավաստիության հիմնավորման նպատակով առանձնակի ուշադրություն դարձնել հետազոտության նախապատրաստական աշխատանքների, գիտականորեն նախատեսված այն ամենի վրա, ինչը հիմնավորում և ապահովում է պատասխանների անկեղծությունն ու լիարժեքությունը:

*Մասնագիտական կրթության որակի ապահովման բաժին*

*27.06.2015թ.*